# 233 Փակ դռների ետևից ուշ ժամին

1. Փակ դռների ետևից ուշ ժամին
Ո՞վ է թակում (2),
Ներսից պատասխան չեն տալիս կրկին,
Ո՞վ է անվերջ թակում:

Այդ քո Փրկիչն է դռան մոտ կանգնած,
Սրտիդ դուռն է թակում կամաց,
Նա կազատի քեզ վիճակից կորսված,
Միայն թե՝ սիրտդ բաց:

2. Սիրտդ դատարկ է, բայց լսվում է ձայն,
Ո՞վ է թակում (2),
Հանգել է լույսդ մխիթարության,
Ո՞վ է անվերջ թակում:

3. Սուրբ Հոգու ձայնը դու չես լսում դեռ,
Ո՞վ է թակում (2),
Բայց այդ կանչը չի դադարում երբեք,
Ո՞վ է անվերջ թակում:

4. Թակոցն հնչում է ուժգին ավելի,
Ո՞վ է թակում (2),
Մեղավո՛ր, դարձի՛ եկ, ապաշխարի՛ր,
Ո՞վ է անվերջ թակում: